

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 1**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ**  
**ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

**Կայացած՝ 15-ը մարտի 2022 թվական**

**քաղաք Գյումրի**

2022 թվականի մարտի 15-ին ՀՀ Շիրակի մարզպետարանի նիստերի դահլիճում ՀՀ Շիրակի մարզպետի գլխավորությամբ տեղի ունեցավ ՀՀ Շիրակի մարզի խորհրդի հերթական նիստը:

Նիստին մասնակցում էին ՀՀ Շիրակի մարզպետի 2 տեղակալները և ՀՀ Շիրակի մարզի բոլոր թվով 6 համայնքների ղեկավարները:

Մարզի խորհրդի նիստին հրավիրված էին նաև.

- ՀՀ Շիրակի մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարները,
- ՀՀ քաղաքաշինական, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի պետ Տիգրան Ղազարյանը,
- ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի պետ Արտուշ Զովհաննիսյանը,
- «ՇԻՐԱԿ» ջրօգտագործողների ընկերության տնօրեն Խաչատուր Խաչատրյանը,
- ՀՀ Շիրակի մարզի համայնքների ավագանիների խմբակցությունների ղեկավարները,
- գանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչները:

Հայաստանի Հանրապետության օրհներգից հետո մարզպետը ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի հետևյալ նախագիծը.

1. Համայնքների միավորումից հետո ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման, աշխատակազմերի կազմավորման և ընթացիկ աշխատանքների կազմակերպման, իրավական հսկողության 2022 թվականի ծրագրի և մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող այլ գործառույթների մասին:

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արամ Անտոնյան*

2. ՀՀ Շիրակի մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի և առաջիկա ծրագրերի մասին:

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ռոման Համայանյան*

3. ՀՀ Շիրակի մարզի համայնքների կողմից տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի մշակման ու ներկայացման մասին:

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, գրոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Կարեն Բաղիշյան*

4. ՀՀ Շիրակի մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման տրամադրման մասին:

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-  
մարզային հողային պետական տեսչության պետ Չորիկ Խաչատրյան*

Հայտարարություններ:

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չեղան, օրակարգը հաստատվեց:

Այնուհետև անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

**ԼՍԵՑԻՆ 1. Համայնքների միավորումից հետո ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման, աշխատակազմերի կազմավորման և ընթացիկ աշխատանքների կազմակերպման, իրավական հսկողության 2022 թվականի ծրագրի և մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող այլ գործառույթների մասին:**

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արամ Անտոնյան*

**(Ձեկույցը կցվում է):**

Շիրակի մարզպետը կարևորեց նոր ձևավորված համայնքներում գործընթացների իրավաչափության ու օրենսդրությամբ սահմանված ժամկետներում դրանց իրականացումը և օգտվելով առիթից, որ մարզի խորհրդի նիստին ներկա են նաև համայնքների ավագանիների խմբակցությունների ղեկավարները՝ նրանց ուշադրությունը հրավիրեց օրենսդրությամբ համայնքի ավագանուն վերապահված լիազորություններին՝ առաջարկելով առավել ակտիվ գտնվել դրանց իրականացման գործում, քանի որ տեղական ինքնակառավարում իրականացնող մարմիններից մեկը համայնքի ավագանին է: Կարևորեց նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհամագործակցությունը և որպես օրինակ նշվեց միավորված համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի հաստիքացուցակները կազմելիս ՀՀ Շիրակի մարզպետարանի և համայնքապետարանների համատեղ աշխատանքներն ու դրանց ընթացքում մարզպետարանի կողմից համապատասխան դիտարկումների հիման վրա կատարված փոփոխությունները: Համաձայն այդ դիտարկումների՝ որոշ հաստիքների առկայության պարագայում առավել արդյունավետ կիրականացվեն համապատասխան աշխատանքները: Այս համատեքստում, Ախուրյան համայնքի ղեկավարն առաջարկեց քննարկել անասունների պատվաստումների իրականացման հնարավորությունը համայնքային անասնաբույժներին վերապահելու հարցը, քանի որ ներկայում դրանք իրականացվում են միայն կենտրոնացված կարգով՝ ոչ համայնքային անասնաբույժների կողմից: Ըստ համայնքի ղեկավարի, այս մոտեցումը հարցի առավել արդյունավետ լուծում կլինի:

**ԼՍԵՑԻՆ 2. ՀՀ Շիրակի մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի և առաջիկա ծրագրերի մասին:**

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ռոման Համայակյան*

**(Ձեկույցը կցվում է):**

Շիրակի մարզպետը կարևորեց գյուղատնտեսության բնագավառում պետական ծրագրերի իրականացումը և հորդորեց մշտական աշխատանքներ իրականացնել այդ ծրագրերի

հանրայնացման ուղղությամբ: Արդյունքում կբարձրանա քաղաքացիների իրազեկվածության և այդ ծրագրերին դիմելիության մակարդակը: Մարզպետը հորդորեց նաև համայնքների ավագանու խմբակցությունների ղեկավարներին այս ուղղությամբ աջակցել համայնքապետարաններին: Տեղեկացրեց նաև, որ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն, համաձայն որի՝ սպասվում է գյուղատնտեսության ոլորտը համակարգող նախարարի տեղակալների այցը Շիրակի մարզ՝ խոշոր տնտեսվարողների, ֆերմերների հետ հանդիպելու և իրավիճակին տեղում ծանոթանալու համար:

**ԼՍԵՑԻՆ 3. ՀՀ Շիրակի մարզի համայնքների կողմից տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի մշակման ու ներկայացման մասին:**

*Չեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Կարեն Բաղդյան*

**(Չեկույցը կցվում է):**

Շիրակի մարզպետն անդրադառնալով սուբվենցիոն ծրագրերին՝ մի շարք դիտարկումներ արեց և նշեց, որ սուբվենցիաներ տրամադրելու կարգում կատարվել են փոփոխություններ, մասնավորապես՝ ավելացվել են արոտավայրեր տանող ճանապարհների բարեկարգման և օպտիկամանրաթելային ինտերնետային կապի հասանելիության ծրագրերը:

Մարզպետն ավելացրեց նաև, որ յուրաքանչյուր ծրագիր անհրաժեշտ է կազմել՝ հաշվի առնելով համայնքների իրական կարիքները, որոնք պետք է բխեն համայնքների շահերից և ուղղված լինեն համայնքների պարտադիր խնդիրների լուծմանը, քանի որ պետության քաղաքականությունն ուղղված է համայնքների համաչափ զարգացմանն ու հզորացմանը: Մարզպետը համայնքների ավագանիների խմբակցությունների ղեկավարներին հորդորեց ակտիվորեն ներգրավվել սուբվենցիոն ծրագրերի քննարկման նպատակով անցկացվող հանրային լսումներին, որը հնարավորություն կընձեռի հստակ դիքորոշումներ ունենալ նաև ավագանու նիստերի ժամանակ: Ըստ մարզպետի, սուբվենցիոն ծրագրերի ավարտական ակտերի կազմման, թերությունների վերացման ուղղությամբ աշխատանքների համակարգման նպատակով, մարզպետի տեղակալի գլխավորությամբ ստեղծվելու է մշտադիտարկման խումբ: Այս հարցի շրջանակում, մարզպետը դիմելով ՀՀ քաղաքաշինական, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի պետին՝ հույս հայտնեց, որ ստեղծվող խմբի հետ կապահովվի արդյունավետ փոխհամագործակցություն: Նշված գործընթացի կազմակերպման նպատակն է՝ բացառել հնարավոր թերությունները, ծրագրերի անարդյունավետ իրականացումը:

**ԼՍԵՑԻՆ 4. ՀՀ Շիրակի մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման տրամադրման մասին:**

*Չեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ Չորիկ Խաչատրյան*

**(Չեկույցը կցվում է):**

Մարզպետն ընդգծեց, որ անհրաժեշտ է աշխատանքներ տանել՝ համայնքներում չմշակվող վարելահողերի քանակը հնարավորինս նվազեցնելու և դրանք ըստ նշանակության օգտագործելու ուղղությամբ: Բացի այդ, համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց աճուրդների և հողերի վարձակալությամբ տրամադրման կազմակերպման գործընթացներին և դրանց թափանցիկությանը՝ կարևորելով օրենսդրությամբ սահմանված գործընթացների խիստ

պահպանման ու հրապարակայնության ապահովումը: Մարզպետը կարևորեց նաև վարձակալական վճարների հավաքագրման հարցը՝ առաջարկելով հարկային պարտավորությունների կատարման ընթացքում թերացող հողօգտագործողների նկատմամբ կիրառել օրենքով նախատեսված միջոցներ:

Մարզպետը որոշ դիտարկումներ արեց նաև համայնքապետարանների ընթացիկ աշխատանքների կազմակերպման վերաբերյալ և մասնավորապես նշեց, որ անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել մարզպետարանից ու այլ մարմիններից համայնքներ ուղարկված տարբեր գրություններին պատշաճ և ժամանակին պատասխանելուն: Միաժամանակ տեղեկացրեց, որ մարզի խորհրդի հաջորդ նիստին քննարկվելու է նաև մարզի հաջորդ տարվա բյուջեի ձևավորմանն առնչվող հարցեր՝ ակնկալելով համապատասխան առաջարկություններ՝ համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններից:

Չեկույցների ավարտից հետո հայտարարություններով հանդես եկան ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալները:

Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանը տեղեկացրեց մարզում 2022 թվականի ոռոգման ջրի մատակարարման ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին: Նշեց, որ դեռևս ս/թ հունվար ամսից կատարվել են նախապատրաստական աշխատանքներ՝ մարզում ոռոգումն անխափան կազմակերպելու նպատակով: Հաշվի առնելով վերջին տարիներին Կառնուտի ջրամբարում ջրի կուտակման հետ առաջացած խնդիրները և ոռոգման ջրի սակավությունը, Շիրակի մարզպետարանն առաջարկություններ է ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարություններ՝ «Շիրակի» ջրանցքի «Գյումրի» ՀԷԿ-ի ջրօգտագործման իրավունքի ժամկետները վերանայելու կապակցությամբ: Առաջարկվել է «Շիրակ» ջրօգտագործողների ընկերությանը մշակել և գործողության մեջ դնել անհրաժեշտ աշխատանքների կատարման պլան (գրաֆիկ), որը հնարավորություն կտա մինչև ոռոգման սեզոնի սկսվելը մաքրել և պատրաստ վիճակի բերել մայր ջրատարները: Միաժամանակ՝ համայնքների ղեկավարներին առաջարկվել է առկա ոռոգման համակարգերին կից տեղադրել աղբամաններ, նախազգուշացնող ցուցանակներ՝ ջրանցքներում կենցաղային աղբ լցնելու դեպքերը բացառելու նպատակով:

Շիրակի մարզպետի տեղակալ Կարեն Մանուկյանը տեղեկացրեց ինքնակամ շինությունների հայտնաբերման, ինչպես նաև կանխարգելված ու կասեցված ինքնակամ շինարարությունների, դրանց հետևանքների վերացմանն ուղղված գործընթացների մասին:

Նիստի ավարտին մարզպետը խոսքը փոխանցեց ՀՀ Շիրակի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Մուշեղ Մարզարյանին, ով անդրադարձավ առաջիկա եռամսյա վարժական հավաքների կամակերպմանն ու այդ գործընթացում համայնքապետարանների մասնակցությանը:

Այլ հայտարարություններ և հարցեր չեղան: ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանը հայտարարեց ՀՀ Շիրակի մարզի խորհրդի նիստի ավարտի մասին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

X 

ՆԱԶԵԼԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՆԱԶԵԼԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ ՏԻ Ա ԳԳՄԴ վարչություն